պանն Գաղղիոյ, այլ աղմուկ մեծ էր յայնժամ 'ի Թագաւորական քաղաքին։ Գանկատ և դժգոհութիւն 'ի բռնաւոր այլազգեաց Երուսաղէմի։ Տոկոսաւոր նոր պարտք սոյն տարւոյ 965 քսակ։ Հրաժարումն Թէոդորոսի 'ի Պատրիարքութենէ, և միաբանացն յԵրուսաղէմէ, իբրեւ ոչ կամեցան ունկնդիր լինել բանից նոցա ազգայինք. վերատին գրեաց Թէոդորոս, եթէ ոչ կամին տալ նոքա հաստուն խորհրդով որոշ պատասխանի, կրեսցեն զխայտառակութիւն մեծ 'ի մօտոյ, եթէ ոչէր ասէ՝ ածեալ իմ զմտաւ զաջ և զահեակ, ապաքէն ոչ ոք կարէր գիտել և իմանալ զտեղի փախստեան և թագստեան իմոյ. մայր տումարքն պատրաստ, ահա տուն ձեր և դուք, քննել եւ իմանալ զորպէսն։

Անդղիական նաւատորմիղն մտանէ 'ի Տարտանելէ եւ ոմոի առաջի Կոստանդինուպօլսոյ. դղրդումն քաղաքին, անդուլ աշխատութիւն քրիստոնեայ ժողովրդոց 'ի գործ չինութեան մարտկոցաց. Հայ և Յոյն Պատրիարքաց խառն ընդ ամբոխին, տեսանել Արքայի եւ զգեցուցանել նոցա վերարկու պատուոյ. և մեծարգոյ երեւիլ Յովհաննու Պատրիարքին յաչս Արքայի։ Խնդիր հրաժարելոյ Յակոբ եպիսկոպոսի 'ի փոխանորդութենէ վասն չքաւորութեան դրամոց եւ անբաւ ծախուց, յոյր սակս անկաւ դժտութիւն 'ի մէջ նորա և Թէոդորոսի, մինչեւ ծանր գրել միմեանց. այլ Պատրիարքն ոչ ետ տեղի բանից նորա, և յորդորեաց զնա արիութեամբ կալ 'ի պաշտօնն, և խիստ բանիւք չյաւելուլ վերս 'ի վերայ վիրաց 'ի վնաս ինքեան և Աթոռոյն։

Անդղիացիք մտանեն յԱղէքսանդրիա, և գրաւեն զքաղաքն Ռէշիտ, պարտին յայլազգեաց և բազմաթիւ գերիք նոցին խեղին յաչս և յականջս և կապին 'ի տուն բանտի։ Խռովութիւն յԵգիպտոս, մահ առաջնորդի տեղւոյն Յարութիւն վարդապետի, հանդիսաւոր թաղումն նորին նախագահութեամբ Պատրիարքին Խպիոց։

Զկնի բազմադիմի խռովութեանց և ատելութեանց որ 'ի մէջ Դաւիթ և Դանիէլ Կաթուղիկոսաց Էջմիածնի, 'ի վերջոյ իշխանաւորք ազգին Կոստանդինուպօլսոյ առին հրովարտակ յԱրքայէ վասն հաստատութեան Կաթուղիկոսութեան Դանիէլի, և գրեցին դիր հանրական, և այլք